

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի թիվ 8 ՆՈՒՀ ՀՈԱԿ վերանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՍՄԿԿ-ԲՄԱՇՁԲ-20/4

ք. Կապան

«04» սեպտեմբեր 2020թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Կապանի <<Նորոգչին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռազմիկ Փարսյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Կապան համայնքի թիվ 8 ՆՈՒՀ ՀՈԱԿ վերանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ըստ Հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱՆԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-

ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախազմանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 179800000 (մեկ հարյուր յոթանասունինը միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 29966667 (քսանինը միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսույնյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով

ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում, դրամական միջոցների փոխանցումը կատարված աշխատանքների դիմաց կատարվում է հետևյալ կերպ՝

5.3.1 գումարի 35 տոկոսը վճարվում է համայնքային բյուջեից.

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Կատարողի կողմից սկզբում հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 35 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312400063՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

5.3.2 գումարի 65 տոկոսը վճարվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրի հիման վրա՝ պետական բյուջեից.

Կատարողի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 65 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312000509՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

Պատվիրատուի կողմից համայնքի մասնաբաժնով վճարում կատարվելուց հետո պայմանագրի, հանձնման-ընդունման արձանագրության, հաշիվ-ապրանքագրի և վճարային փաստաթղթերի սկանավորված տարբերակները ներկայացվում են ՀՀ Սյունիքի մարզպետարան: Մարզպետարանի կողմից փաստաթղթերը համապատասխան մարմիններ ներկայացվելուց և հաստատվելուց հետո միայն պետական բյուջեից հատկացվում են ֆինանսական միջոցներ՝ փոխանցում կատարելով մարզպետարանին: Գումարը մարզպետարանի կողմից համայնքի բյուջետային հաշվին փոխանցվելուց հետո Գնորդի կողմից կատարվում է դրամական միջոցների փոխանցում Վաճառողին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի

կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանալին պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության անկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
«ՖՆ գործառնական վարչություն»
«900312400063 /համայնք/»
«900312000509 /տարվանցիա/»
«ՎՎՎ 09426088»



/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Կապանի «Նորոգչին» ՍՊԸ
Ք. Կապան, Ա. Հարությունյան 1ա
ԲանկԱՅԻՆԶՆԵՍԵՐԼՆԿ ՓԲԸ
«ՀՀ150018295365380»
«ՎՎՎ 09400653»



/ստորագրություն/

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան համայնքի թիվ 8 ՆՈւՀ ՀՈԱԿ վերանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակը	Միավորի ընդհանուր արժեքը /հազ. դրամ/	Ընդհանուր արժեքը /հազ. դրամ/
1	3	4	5	6	7
Պատուհաններ					
1	Պատուհանների ապամոնտաժում պատուհանագոգերով	քմ	167,86	2,200	369,29
2	Ապակեբլոկների քանդում	քմ	96,88	0,900	87,19
3	Մետաղապլաստե պատուհանի բլոկների տեղադրում, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, բացվող	քմ	56,09	31,600	1772,44
4	Մետաղապլաստե պատուհանի բլոկների տեղադրում սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, չբացվող	քմ	166,77	20,800	3468,87
5	Ցանցերի տեղադրում	հատ	32,00	12,800	409,60
6	Պատուհանագոգերի տեղադրում 40սմ լայն. Սպիտակ	քմ	222,86	0,920	205,03
7	Պատուհանագոգերի արժեքը 40սմ լայն.	զծմ	134,83	5,300	714,61
8	Պատուհանների արտաքին շեպերի սվաղում ցեմենտյա շաղախով մինչև 15 սմ լայնությամբ	զծմ	155,75	0,600	93,45
Ընդամենը					7120,49
Դռներ					
1	Դռան բլոկների ապամոնտաժում	քմ	76,08	1,300	98,90
2	Արտաքին դռան բլոկների տեղադրում վերնափեղկով -4 հատ ալյումինե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր)	քմ	11,70	86,000	1006,20
3	Արտաքին դռան բլոկների վերնափեղկերի և պատուհանների տեղադրում (պատուհանի բլոկ չբացվող) -4 հատ ալյումինե, բլոկով, սպիտակ 60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), չբացվող	քմ	11,256	47,000	529,03
4	Արտաքին դռան բլոկի տեղադրում վերնափեղկով 6 հատ առաջին հարկում Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ	քմ	19,16	41,000	785,56
5	Արտաքին դռան բլոկի վերնափեղկերի տեղադրում (պատուհանի բլոկ չբացվող) -7 հատ Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, չբացվող	քմ	2,62	20,000	52,40
6	Ներքին դռան բլոկի տեղադրում 29հատ մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ	քմ	68,36	41,000	2802,76

7	Ներքին դռան բլրկի վերնափեղկերի տեղադրում (պատուհանի բլրկ չբացվող) -9հատ Մետաղապլաստե, բլրկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ, չբացվող	քմ	5,86	20,000	117,20
Ընդամենը					5392,06
Յատակներ					
1	Տախտակե սալերից հատակների քանդում	քմ	81,7	0,450	36,77
2	Փայտե տափազերանների (լազաների) քանդում	քմ	81,7	0,070	5,72
3	Պարկետի հատակի քանդում	քմ	580,3	0,600	348,18
4	Մոզաիկ հատակի քանդում	խմ	6,6	18,000	118,13
5	Կերամիկական սալիկներով հատակի քանդում	քմ	89,3	0,400	35,72
6	Լամինատե հատակի քանդում	քմ	98,0	0,500	49,00
7	Ցեմենտ/ավազե հարթեցնող շերտի քանդում	քմ	849,3	0,400	339,72
8	Խճի նախաշերտի իրականացում 20սմ	խմ	17,55	14,500	254,41
9	Բետոնե հատակի կառուցում B 15 դասի բետոնով	խմ	8,19	46,200	378,28
10	Ամրանային ցանց Փ3-100*100մմ	քմ	116,97	0,800	93,58
11	Ցեմենտ/ավազե հարթեցնող շերտի կառուցում հաստ. 2սմ սանհանգույցներում	քմ	97,07	0,900	87,36
12	Ջրամեկուսիչ շերտի կառուցում 1 շերտ սանհանգույցներում իզոգամով 4մմ և բիտումով	քմ	97,07	4,600	446,52
13	Ցեմենտ/ավազե հարթեցնող շերտի կառուցում հաստ. 3սմ	քմ	994,12	1,300	1292,36
14	Կերամոգրանիտե հատակի կառուցում 600 x 600մմ	քմ	200,04	10,000	2000,40
15	Աստիճանամարշի և պատշվամբի երեսապատում չսահող կերամոգրանիտե սալիկներով 400x400մմ	քմ	50,90	11,800	600,62
16	Կերամոգրանիտե շրիշակների կառուցում 8սմ բարձրությամբ	մ	202,69	1,200	243,22
17	Կերամիկական սալիկների տեղադրում 400x400մմ	ք.մ	97,07	8,000	776,56
18	Լամինատե հատակների կառուցում , 7մմ հաստ. (շրիշակով, սպունգով)	քմ	697,01	6,400	4460,86
19	Շին աղբի բարձում ձեռքով	տ	69,83	0,700	48,88
20	Շին աղբի տեղափոխում 10կմ հեռավ.	տ	69,83	3,200	223,46
Ընդամենը					11839,74
Միջհարկային ծածկերի ուժեղացման հատակագիծ					
1	Անցքերի բացում Փ10մմ	խմ	0,29	18,000	5,27
2	Խարիսխների տեղադրում բացված անցքերում	տն	0,5	100,000	50,28
3	Ամրան Փ8AI	տն	0,503	450,000	226,24
4	Անցքերի բետոնացում B 15 դասի բետոնով	խմ	0,29	46,000	13,48
5	Բետոնե ենթաշերտի ամրանավորում	տն	1,705	19,000	32,39
6	Ամրան Փ6AI	տն	1,705	450,000	767,19
7	Հատակի բետոնացում B 20 դասի բետոնով 6սմ հաստ.	խմ	32,91	49,000	1612,71
Ընդամենը					2707,55
Պատեր և ե/բ կոնստրուկցիաներ					
1	Միջնորմների քանդում 10սմ	քմ	297,75	0,900	267,98
2	Միջնորմային պատերի քանդում 20 սմ հաստությամբ	խմ	17,11	8,900	152,25
3	Բացվածքների իրականացում 550 մմ հաստությամբ քարե պատերի մեջ	խմ	4,62	22,000	101,64
4	Ե/բ ժապավենային հիմքերի կառուցում Բ15 դասի բետոնով	խմ	4,66	54,000	251,42
5	Ամրան Փ12AIII	տ	0,56	450,000	253,52
6	Ամրան Փ8AI	տ	0,17	450,000	77,59
7	Պատի կառուցում խարամբետոնե բլոկներով 400*200*200	խմ	43,80	22,000	963,67

8	Պատերի կառուցում միջնորմային սալերով 100մմ հաստ (400*200*100մմ)	քմ	68,61	3,800	260,72
9	Պատերի ամրանավորում A-I	տն	0,456	500,000	227,99
10	Անկյունակների տեղադրում պատի կայունության համար	տն	0,282	140,000	39,48
11	Անկյունակ 100*8մմ	մ	23,28	7,000	162,96
12	Բացվածքների ուժեղացում	խմ	0,95	650,000	618,80
	Ընդամենը				3378,01
	Հարդարման աշխատանքներ				
1	Պատերի հին սոսնձաներկի մաքրում	քմ	640,9	0,150	96,14
2	Պատերի հախճաասալի քանդում	քմ	76,5	0,600	45,90
3	Պատերի և միջանցքի առաստաղի վնասված սվաղի քանդում	քմ	485,4	1,000	485,40
4	Միջանցքի առաստաղի քսահարթում գաջե շաղախով	քմ	103,6	1,100	113,91
5	Դռների և պատուհանների շեպերի սվաղում գաջե շաղախով	քմ	201,8	5,600	1130,18
6	Պատերի սվաղում լավորակ ցեմենտյա շաղախով	քմ	496,06	1,800	892,91
7	Պատերի լավորակ սվաղ գաջե շաղախով	քմ	570,19	2,300	1311,43
8	Առաստաղի կառուցում գիպասսովարաթթե սալերով 9.5մմ հաստ.	քմ	866,00	4,600	3983,60
9	Պատերի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	1973,8	1,500	2960,67
10	Առաստաղի լավորակ ներկում լատեքսային ներկով	քմ	969,55	1,600	1551,28
11	Քիվերի տեղադրում 15 սմ լայն.	մ	699,62	1,200	839,54
12	Պատերի երեսապատում հախճաասալիկներով	քմ	222,90	7,700	1716,33
13	Սանհանգույցների պատերի նկարազարդում	քմ	31,91	8,200	261,66
14	Կախովի առաստաղի կառուցում պլասմասե նյութերից գունավոր 20սմ	քմ	106,0	6,000	635,73
15	Այլումինե բազրիքի տեղադրում	մ	12	30,000	360,00
16	Շին աղբի բարձում ձեռքով	տ	23,30	0,700	16,31
17	Շին աղբի տեղափոխում ավտոմեքենայով 10կմ	տ	23,30	3,200	74,56
	Ընդամենը				16475,54
	Տանիք				
1	Գոյություն ունեցող արքշիֆերային տանիքի քանդում	քմ	1250,2	0,200	250,05
2	Թիթեղյա ծածկի քանդում (տանիքի ճոռեր,, ձեղնահարկի լուսամուտների կողեր)	քմ	263,07	0,100	26,31
3	Զրհորդան խողովակների քանդում	գծմ	72,00	0,300	21,60
4	Փայտե կոնստրուկցիաների քանդում	խմ	19,52	27,000	527,03
5	Նոր փայտե կոնստրուկցիաների կառուցում	խմ	21,22	250,000	5304,25
6	Տանիքի փայտե կոնստ. -ի մետաղական ամրացման դետալների (ճարմանդներ) տեղադրում	կգ	77,00	0,700	53,90
7	Տանիքի ձեղնահարկի փայտե լուսամուտների տեղադրում	հատ	6,00	57,000	342,00
8	Տանիքի ծածկույթի կառուցում գունավոր պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ. Գունավոր KՌ21-0,5	քմ	1250,2	7,700	9626,85
9	Տախտակ կավարմածի	խմ	3,628	195,000	707,46
10	Տանիքի գազաթագծի, արցունքաթափի և ձեղնահարկի լուսամուտների կողերի թիթեղապատում գունավոր ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ.	քմ	204,55	6,000	1227,29
11	Տախտակ գազաթագծի ըստ նախագծի	խմ	1,500	195,000	292,50
12	Ձևարգելքների տեղադրում 0,55մմ գունավոր թիթեղից	քմ	76,88	6,000	461,28
13	Տանիքի կախովի ճոռերի կառուցում գունավոր ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ.	գծմ	261,50	7,800	2039,70
14	Ճոռի տախտակ ըստ նախագծի	խմ	3,18	195,000	620,10
15	Զրհորդան ձագարների տեղադրում 100*100մմ	հատ	18,00	4,300	77,40

16	Ջրհորդրան խողովակների տեղադրում գունավոր ցինկ. թիթեղից 100*100մմ տրամագծով	գծմ	72,00	6,100	439,20
17	Ջրհորդրան արմունկների տեղադրում գունավոր 100*100մմ տրամագծով	հատ	18,00	1,500	27,00
18	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	խմ	21,22	7,300	154,88
19	Տանիքի կավարամածի հրապաշտպանություն	քմ	1250,2	0,200	250,05
20	Շին աղբի բարձում ավտոմեքենաներին ձեռքով	տն	26,93	0,700	18,85
21	Շին աղբի տեղափոխում 10կմ հեռավորության վրա	տն	26,93	3,200	86,19
Ընդամենը					22553,88
Մուտքերում մետաղական հովհարի կառուցում					
1	Պողպատե քառակուսի խողովակներից թեթև մետաղական կոնստրուկցիաների մոնտաժ	տ	0,7359	142,000	104,50
2	Պողպատե քառակուսի խողովակ 40x30x2,5մմ	մ	143,52	1,500	215,28
